# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

**<<ՇՀԱՊՁԲ-15/12-7-2016 ԵՊԲՀ>> ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի հայտերի բացման նիստի**

**ք. Երևան** **_17_ _հոկտեմբերի_ _2016թ._**
**ժամը _12$^{00}$_**

**Մասնակցում էր հանձնաժողովը հետևյալ կազմով՝**
Հանձնաժողովի նախագահ՝ **Գ. Հովհաննիսյանը**
Հանձնաժողովի անդամներ՝ **Ն. Թևոսյանը, Ա. Բաղյանը**
Հանձնաժողովի քարտուղար՝ **Ս. Մկրտչյանը**

**1. Տեղեկատվություն գնման առարկայի յուրաքանչյուր չափաբաժնի ընդհանուր նախահաշվային գնի և հայտեր ներկայացրած մասնակիցների մասին**
**(Գ. Հովհաննիսյան)**

1.1 Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> թիվ 168-Ն որոշման 44-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման առարկայի յուրաքանչյուր չափաբաժնի ընդհանուր նախահաշվային գինը՝ մեկ թվով արտահայտված.

| Չ/հ | Ապրանքների անվանումները | Ապրանքների ընդհանուր նախահաշվային գները՝ մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | Պրոյեկտոր | 1400000 |

1.2 Ընդունել ի գիտություն, որ սահմանված ժամկետում հայտեր են ներկայացրել <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի հետ շրջանակային համաձայնագրեր կնքած հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակիցների | | |
|---|---|---|---|
| | Անվանումը | Գտնվելու վայրը (հասցեն) | Կապի միջոցները |
| 1 | <<ՋԻՎԻ ԷՆ>> ՍՊԸ | ք.Երևան,Խանջյան 41/1 | Էլ. հասցե՝ gvnllc12@gmail.com<br>Հեռ. 093-55-01-55 |
| 2 | <<Կոմպասս>> ՍՊԸ | ք.Երևան,Չարենցի 66/Սայաթ Նովա 15 | Էլ. հասցե՝ compassarmeps@gmail.com<br>Հեռ. 010-52-37-37 |
| 3 | <<Պատրոն ՌՄ>> ՍՊԸ | ք.Երևան, Վարդանանց 18/2 | Էլ. հասցե՝ corp@patron.am<br>Հեռ. 010-54-43-46 |
| 4 | <<Էդվարդ Քոմփյութերս>> ՍՊԸ | ք.Երևան, Սայաթ-Նովա 33-79 | Էլ. հասցե՝ meri@ognakan.am<br>Հեռ. 010-58-85-81 |
| 5 | <<Փի-Սի էլեկտրոնիկս>> ՍՊԸ | ք.Երևան, Անդրանիկի 30/30 | Էլ. հասցե՝ tender@pc-electrinics.am<br>Հեռ. 010-73-33-88,055-72-22-88 |
| 6 | <<Էյչ Գրուպ>: ՍՊԸ | ք.Երևան, Բաշինջաղյան 1 փ. 13/30 | Էլ. հասցե՝ khv_84@mail.ru<br>Հեռ. 091-40-40-73 |

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

**2. Տեղեկատվություն հայտեր պարունակող ծրարների կազմման և ներկայացման համապատասխանության մասին**
**(Գ. Հովհաննիսյան)**

2.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտեր պարունակող ծրարները կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3 դեմ-0:

**3. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի (հայտում առկա փաստաթղթերի)՝ հրավերի պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին**
**(Գ. Հովհաննիսյան)**

3.1 <<ՋԻՎԻ ԷՆ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը (հայտում ներառված փաստաթղթերը) կազմված են հրավերի պահանջներին համապատասխան:

3.2 <<Կոմպասս>> ՍՊԸ -ի կողմից ներկայացված հայտը (հայտում ներառված փաստաթղթերը) կազմված են հրավերի պահանջներին համապատասխան:

3.3 <<Պատրոն ՌՄ>> ՍՊԸ -ի կողմից ներկայացված հայտը (հայտում ներառված փաստաթղթերը) կազմված են հրավերի պահանջներին համապատասխան:

3.4 <<Էդվարդ Քոմփյութերս>> ՍՊԸ -ի կողմից ներկայացված հայտը (հայտում ներառված փաստաթղթերը) կազմված են հրավերի պահանջներին համապատասխան, բացառությամբ՝

- Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու դիմումում (Հավելված N 1) հստակ նշված չէ, թե որ չափաբաժինը կոնկրետ որ երկրի արտադրանք է հանդիսանում:

3.5 <<ՓԻ-ՍԻ Էլեկտրոնիկս>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը (հայտում ներառված փաստաթղթերը) կազմված են հրավերի պահանջներին համապատասխան:

3.6 <<Էյչ Գրուպ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը (հայտում ներառված փաստաթղթերը) կազմված են հրավերի պահանջներին համապատասխան:

.

Ընդունվել է որոշում՝ կողմ-2, դեմ-0:

**4. Տվյալներ մասնակիցների կողմից ներկայացրած գնային առաջարկների մասին**
**(Գ. Հովհաննիսյան)**

4.1 Մասնակիցների կողմից առաջարկված գնային առաջարկները ներկայացված են ստորև:

| Հ/հ | Մասնակիցների անվանումները | Մասնակիցների կողմից առաջարկված գները, ընդ որում՝ | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | Ինքնարժեք | Շահույթ | Առաջարկված գինը (առանց ԱԱՀ-ի) | ԱԱՀ | Առաջարկված ընդհանուր գինը |
| Չափաբաժին N 1 – Պրոյեկտոր | | | | | | |
| 1 | <<ՋԻՎԻ ԷՆ>> ՍՊԸ | 1043000 | 112000 | 1155000 | 231000 | 1386000 |
| 2 | <<Կոմպասս>> ՍՊԸ | 1001000 | 136500 | 1137500 | 227500 | 1365000 |
| 3 | <<Պատրոն ՌՄ>> ՍՊԸ | 1055250 | 117250 | 1172500 | 234500 | 1407000 |
| 4 | <<Էդվարդ Քոմփյութերս>> ՍՊԸ | 1414873 | 157210 | 1572083 | 314417 | 1886500 |
| 5 | <<ՓԻ-ՍԻ Էլեկտրոնիկս>> ՍՊԸ | 1100000 | 55000 | 1155000 | 231000 | 1386000 |
| 6 | <<Էյչ Գրուպ>> ՍՊԸ | 1100000 | 63400 | 1163400 | 232680 | 1396080 |

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

**5. Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին**
**(Գ. Հովհաննիսյան)**

5.1 Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> թիվ 168-Ն որոշման 45-րդ կետի դրույթներով՝ հանձնաժողովը որոշեց կասեցնել սույն նիստը և էլեկտրոնային եղանակով տեղեկացնել մասնակցին՝ առաջարկելով մինչև 19.10.2016թ.-ի ժամը $12^{00}$-ն շտկել արձանագրված անհապատասխանությունները հրավերով սահմանված ձևով:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

| | | |
|---|---|---|
| **Հանձնաժողովի նախագահ՝** | _____ *(ստորագրությունը)* | **Գ. Բաղդասարյան** |
| **Հանձնաժողովի անդամներ՝** | _____ *(ստորագրությունը)* | **Ա. Բաղյան** |
| **Հանձնաժողովի անդամներ՝** | _____ *(ստորագրությունը)* | **Ն. Թևոսյան** |
| **Հանձնաժողովի քարտուղար՝** | _____ *(ստորագրությունը)* | **Ս. Մկրտչյան** |

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

**<<ՇՀԱՊՁԲ-15/12-7-2016 ԵՊԲՀ>> ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի հայտերի բացման նիստի (շարունակություն)**

**ք. Երևան** **_19_ _հոկտեմբերի_ _2016թ._**

**ժամը _12$^{00}$_**

**<u>Մասնակցում էր հանձնաժողովը հետևյալ կազմով՝</u>**
**Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Բաղդասարյանը**
**Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Բաղյանը,**
**Հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Մկրտչյանը**
**Հնաձնաժողովի նիստին բացակայում էր՝ Ն. Թևոսյանը**

**1. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի (հայտում առկա փաստաթղթերի)՝ անհամապատասխանությունների շտկման մասին**
**(Գ. Բաղդասարյան)**

**1.1** <<Էդվարդ քոմփյութերս>> ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի շտկել իր կողմից ներկայացված հայտում առկա անհամապատասխանությունները հրավերով սահմանված ձևով:

**1.2** Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի 168-Ն որոշման 46-րդ կետի դրույթներով հանձնաժողովը որոշեց՝ <<Էդվարդ Քոմփյութերս>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:

Ընդունվել է որոշում՝ կողմ-2, դեմ-0:

**2. Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին**
**(Գ. Բաղդասարյան)**

2.1 Մասնակիցների զբաղեցրած տեղերի մասին տվյալները ներկայացված է ստորև.

| Չափաբաժինների համարները | Մասնակիցների զբաղեցրած տեղերը, ընդ որում՝ | | |
|---|---|---|---|
| | 1-ին տեղ | 2-րդ տեղ | 3-րդ տեղ |
| 1 | <<Կոմպասս>> ՍՊԸ | <<ՋԻՎԻ ԷՆ>> ՍՊԸ,<<Փի-ՍԻ Էլեկտրոնիկս>> ՍՊԸ | <<Էյչ Գրուպ>> ՍՊԸ |

Ընդունվել է որոշում՝ կողմ-2, դեմ-0:

**3. Գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից կատարվելիք գործողությունների մասին**
**(Գ. Բաղդասարյան)**

3.1 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան՝

ա) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին և երկրորդ տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերի 2.3 կետի <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ.

բ) Ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2016 թվականի հոկտեմբերի 25-ը ներառյալ, ներկայացնել հրավերի 2-րդ մասի՝ հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը.

գ) 3.1 կետի բ) ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-2, դեմ-0:

**Հանձնաժողովի նախագահ՝** _____ **Գ. Բաղդասարյան**
(ստորագրությունը)

**Հանձնաժողովի անդամներ՝** _____ **Ա.Բաղյան**
(ստորագրությունը)

**Հանձնաժողովի քարտուղար՝** _____ **Ս. Մկրտչյան**
(ստորագրությունը)